ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզ <<Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում հետևյալ թափուր աշխատատեղը համալրելու համար.

Դասվար 1/մեկ/ աշխատատեղ(13 դասաժամ),

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1.Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3.Անձը հաստատող փաստաթուղթ ,

4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձև 5),

6.Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերն ընդունվում են ՀՀ կրթության , գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում մինչև դեկտեմբերի 21 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա դեկտեմբերի 27-ին՝ ժամը 11:00-ին, Կոտայքի մարզի <<Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սուրեն Մնացականյանի 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0222) 2-18-61 կամ (0222) 2-11-91 հեռախոսահամարներով:

ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ

08.12.2021թ.